ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՍԵԴԱ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Տեր-Մինասյան,

Ի պատասխան Ձեր 30.10.2025թ. գրության՝ տեղեկացվում է, որ Երևան քաղաքի Բագրատունյաց 48/1 հասցեում առկա մարզադպրոցի վերանորոգումը դեռ չի մեկնարկել, ուստի շինարարության ավարտի վերաբերյալ հստակ ժամկետներ նշել հնարավոր չէ:

Այս փուլում աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչություն հանձնված պատրաստի նախագծանախահաշվային փաստաթղթերը ներկայացվել են համալիր փորձաքննության:

Միաժամանակ տեղեկացվում է, որ համաձայն Երևան քաղաքի ավագանու 2023 թվական մայիսի 23-ի N 781-Ա որոշման, որպես նվիրաբերություն ընդունվել է «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի կողմից Երևան համայնքին փոխանցվող 254,000,000 /երկու հարյուր հիսունչորս միլիոն/ ՀՀ դրամը՝ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող ք. Երևան, Բագրատունյաց պողոտա 48/1 հասցեում գտնվող շենքի վերանորոգման աշխատանքներ կատարելու համար:

Տեղեկացվում է նաև, որ վերոնշյալ մարզադպրոցի վերակառուցման նպատակով վճարումներ դեռևս չեն իրականացվել:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ